ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

«27» նոյեմբերի 2009թ.

ՈՐՈՇՈՒՄ N 28 / 02
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ

Քննարկելով ՀՀ բանկերի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը, հաշվի առնելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2009թ. բյուջեով նախատեսված պարտատոմսերի թողարկման , ինչպես նաև հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը.

Խորհուրդը որոշեց՝

1. Թողարկել և պարտատոմսերի անվանական արժեքով տեղաբաշխել 250.000.000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 18 (տասնութ) ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10 (տասը) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրություն ձևով՝ բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով, սկսած ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկման ազդագիրը գրանցելուն հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրից մինչև տեղաբաշխման օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16:00:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետը պարտատոմսերի բաժանորդագրությունների քանակը 25,000 հատը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

4. Սահմանել, որ պարտատոմսերի հետգնում և վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

5. Արժեկտրոնային եկամտի գումարը վճարել, վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի հաշվարկային հաշիվներին:

6. Պարտատոմսերի մարումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկած 18 ամիս անց: Մարման գումարը վճարել պարտատոմսերի մարման օրվա նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ում կամ մասնաճյուղերում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի հաշվարկային հաշիվներին:

7. Հաստատել տեղաբաշխմանը մասնակցելու հայտի ձևը (կցվում է):

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի Նախագահ՝ Բ. Բեգլարյան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտատուի անունը, ազգանունը	
Փոստային հասցեն	
Անձնագրի համարը	

Անձնական բանկային հաշվի վավերապայմանները
_____ _____ _____

Արժեթղթերի քանակը (թվերով և տառերով) _____

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում հայտատուի հաշվի վավերապայմանները (առկայության դեպքում)
_____ _____

Հայտատու՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» «_____» _____ թ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտատուի անունը	Իրավաբանական հասցեն

ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականի՝		
սերիան	համարը	տրման ամսաթիվը

Հայտատուի ՀՎՀՀ

Հայտատուի հաշվարկային հաշվի վավերապայմանները
_____ _____ _____

Հայտատուին ներկայացնող, տվյալ գործարքի (արժեթղթերի գնման) համար պատասխանատու անձի	
անունը	հեռախոսի համար(ներ)ը

Արժեթղթերի քանակը (թվերով և տառերով) _____

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում հայտատուի հաշվի վավերապայմանները (առկայության դեպքում)
_____ _____

Հայտատուին ներկայացնող անձ՝ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» «_____» _____ թ